շունը բարեսրտութեամբ ներում էր իմ յիմարութիւններին, գնում էր դէպի այն կողմը, ուր որ ես շուռ էի տալիս:

Երբ տասն տարեկան էի, ամէն երեկոյ անհամբերութեամբ սպասում էի տաւարների նախիրի արօտից վերադառնալուն: Հէնց որ հեռուից նկատում էի մեծ ճանապարհի վրայ փոշու ամպերի բարձրանալը, վազում էի նախիրի առջեւ, բռնում էի աւանակներից մէկին, նստում էի նրա մէջքի վրայ: Ա՜խ, որքա՜ն ուրախանում էի ես, երբ իմ Պեգասը վազում էր հեռու եւ հեռու դաշտերի մէջ...: Իսկ յետոյ աւանակներին փոխարինեցին մատակ ձիաները: Առանց սարսափելու չէր կարելի նայել ինձ վրայ, երբ ես դեւի նման բռնած վայրենի մատակի բաշից, մրրիկի պէս պտտեցնում էի մերկ եւ առանց սանձի ձիուն: Հովիւները բարկանում էին, զգուշացնում էին ինձ, բայց ի՞նչ ուշադրութիւն կը դարձնէր նրանց խօսքերին յանդուգն եւ զոարճասէր մանուկը...

Բայց որքա՜ն անգամ վեր ընկայ ես... որքա՜ն անգամ ձեռքս, ոտքս կոտրեցի... որքա՜ն անգամ երեսս ջարդուած, արիւնաթաթախ տուն են բերել ինձ...: Մայրս լաց էր լինում, ասում էր՝ «ուր ես ադամորդու զարմ չեմ», թէ ես «սատանայի ծնունդ եմ», թէ ես «մի փորձանքով պիտի մեռնեմ», կամ գետի մէջ կը խեղդոեմ, կամ ծառից, կամ ժայռից վեր կընկնեմ եւ կամ դաշտի գազանները կուտեն ինձ... Մայրս գնում էր, վարդապետիս պատմում էր իմ անկարգութիւնները, բայց ոչ նրա «ֆալախկան», ոչ նրա «խրատը» եւ ոչ «աղիւսի կտորտանքը» — ոչ մէկը չկարողացան զսպել ինձ մանկական խաղերից, որոնք այնպէս սաստիկ կերպով արգելուած էին աշակերտներին:

Նոյնպիսի սէր ունէի ես դէպի հրացան գործիքները: Երեւակայեցէք այն ուրախութիւնը, երբ իմ մանկական երկու ամենագլխաւոր բաղձանքները իրագործուեցան. — ես այժմ ունէի ձի եւ զէնքեր:

Նոյն աւուր երեկոյեան պահուն, որի առաւօտեան ժամանակ ես աւերակների մէջ հանդիպեցի բոշայ կնոջ հետ, կրկին յայտնուեցան երկու զեյթունցիները, որոնց մէկին կոչում էին Մուրադ, միւսին Ջալլադ: Նրանք բերեցին իրանց հետ չորս գեղեցիկ ձիաներ: Երեւում էր, այդ ձիաները մեզանից փոքր-ինչ հեռու գտնուած լեռների մէջ պահում էին, որովհետեւ աւերակների մօտ արօտ չկար: Կարօն ինձ իր մօտ կանչեց, եւ յանձնելով ձիերից մէկի սանձը, ասաց.

— Ահա քո ձին, ես գիտեմ, որ դու անվարժ չես լինի դրան զսպելու մէջ:

Յետոյ, տալով ինձ մի հրացան, մի զոյգ ատրճանակ եւ մի թուր, աւելացրեց.